

113

314 №

1928



ԹՈՐՈՍԻ ՄԵՂՎԱՆՈՑԸ

Մանկական պատմվածք


ՀԱՅՐԻԿ Տ. ԱՎԱԳՅԱՆԻ



ԹՈՐՈՍԻ ՄԵՂՎԱՆՈՑԸ

Գարուն եր: Մեղունները կարծես շունչ ելին առել: Տաք եր ուրը, և նրանք ուրախ դողոց ելին բարձրացրել:

Թորոսն ու իր հայրն աշխատում ելին մեղվանոցում: Նրանք արդեն գիտեցին՝ վորը մաշր ունի, վորի մայրը պառավ ե, վորինը՝ լավ, վորը պաշար ունի և վորը չե: Թուլերին միացրել ելին, անմաշր մեղուններին մայր տվել: Իսկ այսօր հատակներն ելին մաքրում:



Թորոսը հոգնել եր: Մի մեղու լել նրա ձեռքը կծել եր, ցավում եր: Ծխարարը ձեռքին՝ լերբեմն ծուլորեն ծուխ եր տալիս մեղուններին:

— Դե հերիք ե, հայրիկ, կմկմաց նա, — հետո կնայենք:

— Ինչ ես ծուլանում, — ասաց հայրը, — եզ աշխատանքը հետաձգել չի կարելի: Մեղրն ել ուտելիս ըսկի չեա հոգնում:

Լույս ե տեսնում ՀՍԽՀ ԼժԿ Սոցդաս.-Գլխավարչության
կից գործող մանկական գրականության հանձնաժողովի
հավանությունը № 21

— Յա,—ծիծաղեց Թորոսը,—քաղցր մեղրը ուտելիս մարդ կը հոգնի:

Թորոսը սուս արեց ու շարունակեց ոգնել հորը:

Յերբ վերջին մեղուն մաքրեցին և վերջացրին, նստեցին մեղ-վանոցի շենքի առաջ հանգստանալու:

— Գիտե՞ս ինչ Թորոս,—ասաց հայրը,—դու շատ ես ծուլանում, յես պիտի բժշկեմ քո ծուլութիւնը: Լալ կլինի՝ եղ փեթակներից մեկը հատկացնեմ քեզ, ինքդ պահես ու պատասխանատու լինես նրա համար:

— Ե՛հ, չեմ ուզում,—հորանջելով ասաց Թորոսը,—յես մեղու չեմ կարող պահել:

— Ինչո՞ւ չես կարող,—խիստ ձայնով ասաց հայրը,—Իսկ յես գիտեմ, վոր լավ կպահես:

Նա վեր կացավ:

— Նստեղ արի՝ ցույց տամ քեզ քո մեղուն:

Թորոսը դժգոհ հետևեց հորը:



11 - 56 646 9P

Հայրը կանգ առավ մի փեթակի մոտ, վոր լավ աշխատում էր:

— Ա՛յ, ես մեղուն,—նա վերցրեց կուռը, բարձր, վոր զրկած

էր կտավի վրայից, մեղվի բունը տաք պահելու համար, դրեց մի կողմ, կտավը բարձրացրեց ու սկսեց մեկ մեկ հանել շրջանակներն ու ցույց տալ Թորոսին:

— Տես, մեղուն լավ, աշխատող մեղու յե, մայրը՝ ջահել, վորդը՝ լավ, մեղրի պաշարը՝ բավարար: Կպահես, կխնամես, բունը կտաքացնես, վոր վորդը չմըսի: Շրջանակների յերկու կողքից միջ-նատախտակներ կդնես, կողքերից ել հարդով լցրած բարձեր կդնես, մոմաթերթ կտաս, ձագն ել դու կբռնես, մի խոսքով՝ ինչ վոր յես մյուս մեղունների հետ կանեմ, նույնը դու կանես:

— Ախր չեմ կարող, ե, բա վոր կծեցի՞ն,—լացակումաց ասաց Թորոսը:

— Դո՛ւ գիտես, յես պայման եմ դնում—թե վոր չուզեցիր պահել, ծուլացար, ես տարի քեզ մեղր չեմ տալու. ինչպես կուզես՝ արա:

Ասաց ու թողեց, գնաց տուն: Թորոսը մնաց փեթակի մոտ կանգնած:

Շատ մտածեց, շատ դես դեն տվեց, մի լեւք չգտավ: Մեղվի վրա գլուխ ցավացնել չէր ուզում, մեղր ուտել ել շատ էր սիրում:

Նա սաստիկ բարկացած էր, բաց արեց փեթակը և, են ե՝ ուզում էր նայել ներսը, մի մեղու տղզալով թռավ, և ուղիղ ըթիծայրը կծեց: Յերկի շատ կոպիտ էր վարվել մեղվի հետ:

Թորոսը քիթը բռնեց ու մի կերպ փեթակի բերանը ծածկեց: Ուրիշ մեղուններ ևս հարձակվեցին նրա վրա, ու նա փախավ, թագ-նվեց մեղվանոցի շենքում:

Քթի ծայրից մեղվի փուշը հանեց ու, քիթը բռնած, յերկար մտածում էր:

Ի՞նչ անի, հակառակվել հորը չի կարող, մեղուններից ել շատ է փախնում, ենպես փիս կծում են... և ինչո՞ւ յեն կծում, չե՞ վոր կծելուց հետո սատկում են, չեն հասկանում, ինչ ե...:

Բայց մի ներքին ձայն նրան ասում էր, վոր յեթե զգուշու-թյամբ և համբերութամբ վարվի մեղվի հետ ու պետք յեղած դեպ-քում ցանց դնի գլուխը, ել նրանք չեն կծի:

— Բա դժվար է ախր, ե... Նորից հուսահատվում էր Թորոսը ու տրորում ցավացած տեղը:

Եղ որվանից նա, թեև դժգոհ, բայց ուշի ուշով հետևում էր փեթակին: Հարկավոր յեղած դեպքում, յերբ մեղունները դաշտում

ձավական մեղր չեյին կարողանում գտնել, կերակրամանով շաքարաջուր եր տալիս: Նոր չեչեր (մեղրահան մեքենայով քամած դատարկ մեղրահացեր) եր տալիս, հետևում եր, վոր վորդը չմըսի և այլն:

Եդ տարին մեղվաբերքն ուշ սկսվեց:

Թորոսը չերբեմն բաց եր անում իր փեթակը ու տխուր նայում սև մեղրահացերին, վորոնց վրա մեղուները պարապ ման եյին գալիս:

Հայրիկ, բա ես վոնց ե, վոր մեղուները վոչինչ չեն անում—հարցնում եր նա հորը:

— Դեռ մեղրաբերքը չի սկսվել: Յես սպասում եմ, վոր եստեղ գլուղում բերք սկսվի, մեղուներն աշխատեն՝ ինչքան կարող են, հետո տանենք սար:

— Բա ինչի եսպես սև են ես մոմերը:

— Թող աշխատանքն սկսվի, դու կտեսնես, թե ինչպես կկերպարանափոխվեն նրանք, — հանգստացնում եր հայրը վորդուն:

— Եհ, — դժգոհ հեռանում եր Թորոսը, — ինչքան սպասեմ, վոր նա գործ անի, զահլաս գնաց:

Մայիսի վերջին մի քանի որ անձրևներ յեկան:

Անձրևները վերջացել եյին, և մի չերեք որ ել անցել եր, չերը հայրն ասաց Թորոսին:

— Ձգուշ յեղիր, եսոր, եգուց մեղուն պիտի սկսի աշխատել, արդեն ժամանակն ե:

Թորոսը գնաց մեղվանոց, սրտատրոփ բաց արեց փեթակի բերանը, նայեց ու ուրախությունից շշմեց — ահագին փոփոխություն եր կատարվել մեղվի բնում՝ մեղուները լցվել եյին միջնատախտակի ու շրջանակների արանքը ու սկսել եյին սպիտակ, փոքրիկ չեչեր շինել, իսկ շրջանակների վերևի ձողիկների կողքի սև մոմերը հիմա սկսել եյին սպիտակին տալ:

Թորոսը շտապ ծածկեց փեթակը ու գժվածի նման իրեն գցեց մեղվանոցի շենքը, վորտեղ հայրը փեթակներ եր շինում:

— Հայրիկ, հայրիկ, — շնչասպառ բղավեց նա — մեղուները... քաշում են...

— Ինչ են քաշում, — ժպտալով հարցրեց հայրը...

— Հաց, հաց... մեղրահաց...

Հայրը ծիծաղեց.

— Դե լավ ե, ելի: Հիմա ինչ պիտի անես:

Թորոսը կանգ առավ:

— Ինչ պիտի անեմ...

— Յես քեզ վոնց եյի ասել, հապա հիշիր:

— Վոնց եյիր ասել... — ծոծրակը քորելով ուղում եր մտաբերել Թորոսը — հա... բները լայնացնեմ, մոմաթերթ տամ, չե:

— Այ, հիշեցիր, դե գնա ու արա: Միայն իմացիր, վոր մենակ քո մեղուն չի, բոլոր մեղվանոցը պիտի նայես ու իմանաս՝ վորին մոմաթերթ ե հարկավոր տալ, յես զբաղված եմ:

Թորոսը բարեխիղճ կերպով կատարեց իր վրա դրած պարտականությունները: Յերկու որ շարունակ շրջանակները մեխեց, մավթուլեց, մոմաթերթ կպցրեց, ապա բաժանեց այդ շրջանակները փեթակներին:

Յանցը դնում եր գլուխը, ծուխ տալիս մեղվին, բարձր հանում եր միջից, մեջնատախտակը քաշում մի կողմ և ապա դնում մոմաթերթը շրջանակով: Հայրը չերեկոյան կողմ ոգնում եր նրան ու ցուցյուններ տալիս:

— Յես արդեն մեղվապահ եմ, չե, — հպարտությամբ հարցնում եր Թորոսը:

— Իսկական ել չե, մի քիչ... յերբ քո փեթակի մեղրը կերար, այն ժամանակ կլինես իսկական մեղվապահ:

— Յես դեռ իսկական մեղվապահ չեմ ուրեմն... — մտածում եր Թորոսը ու յերազում այն մասին, թե յերբ կդառնա իսկական մեղվապահ ու թե տանը, թե դպրոցում բոլորին իրավունք կունենա ասելու, վոր ինքը մեղվապահ ե և մեղուներին ել իսկի չի վախում:

Յերբեմն նրա մոտ գալիս եյին նրա ընկերները և նա ցույց եր տալիս նրանց փեթակները ու չերկար դասախոսություններ կարդում:

— Իսկ յերբ յես կդառնամ իսկական մեղվապահ... ավելացնում եր նա խորհրդավոր կերպով ու չեր վերջացնում խոսքը, կարծես շատ քչերը կարող եյին հասկանալ, թե նա ինչ պիտի անի, յերբ դառնա իսկական մեղվապահ:

Սկսվել եր մեղվի աշխատանքը գլուղում: Անընդհատ մոմաթերթ եյին տալիս և մեղուները քաշում եյին սպիտակ, սիրուն մեղրահացեր ու մեջը վորդ դնում, մեղր ու ծաղկափոշի լցնում:

Նոր պատրաստված հացերը թորոսը հոր խորհրդով անց երկացնում բնի ներսը, հին շրջանակների արանքները:

Թորոսի մեղուն 6 շրջանակ ունեւր, հիմա դարձել եր 10: Դեռ յերկու շրջանակի տեղ ել կար:

Մի որ նա նկատեց, վոր մեղուն առաջվա պես ել չի աշխատում: Մեղուն չափազանց շատացել եր փեթակի մեջ և գալիս կծիկ կապում, կախվում եր շորից, փեթակի դատարկ տեղում:

— Հայրիկ, — ասաց թորոսը հորը, — ախար ել սպիտակ, լավ հացեր չի քաշում իմ մեղուն:

— Պետք ե ստուգել, — ասաց հայրը, — գուցե ձագի յե նստել:

— Ե՛, ի՞նչ անենք, վոր ձագի նստեց՝ ել չպիտի՞ աշխատի:

— Յերբ մեղուն մտադրություն ունի ձագ տալու, ալլես չի աշխատում, կամ աշխատում ե շատ թույլ, միայն անհրաժեշտ գործն ե կատարում փեթակի մեջ ու մեղր բերում բիշ-միշ:

— Բա ենքան շատ մեղուններ ինչո՞ւ յեն պարապ նստում:

— Եսպես ե մեղվի բնավորությունը: Ապա գնանք, ստուգենք:

Ստուգեցին ու տեսան, վոր մեղրահացերի ներքեի կողմից մի քանի շրջանակների վրա բազմաթիվ մայրապտուկներ են դրել, և մայրն ածել ե նրանց մեջ:

— Այ, — ցույց տվեց հայրը, սրանք մայրաբջիջներ են և 13-14 որից հետո առաջին մայրը դուրս կգա:

— Իսկ յերբ ձագ կտա:

— 10-11 որից հետո ձագ կտա, յեթե յեղանակը նպաստավոր լինի: Լավ հետեիր փեթակիդ, վոր իմանաս ձագի դուրս գալու ժամանակը:


— Յեվ թորոսը բարեխղճորեն հետևում եր: Աշխատանքը թույլ եր, բայց կեսորից հետո մեղուն դուրս եր գալիս ու խաղում արկանոցի առաջ, ուրախ ու ուժեղ դզող բարձրացնելով: Ամենից բարձր հնչում եր բռնների ձայնը, վորոնք շատ ելին փեթակի մեջ:

Թորոսը մի տեսակ վողկորության մեջ եր: Ամեն մի բոպե վազում դիտում եր մեղվին, նայում ներսը և սպասում, անհամբեր սպասում, թե յերբ դուրս կգա ձագը:

Յեվ մի որ ել ձագը դուրս յեկավ. թորոսը, ինչպես միշտ, եզտեղ եր: Նա տեսավ՝ ինչպես մեղուններն սկսեցին արագ դուրս խուժել արկանոցից, ապա բիշ հետո մայրը ծանրորեն դուրս թռավ ու խառնվեց մեղուններին: Շուտով մեղուններն ամպի պես պատեցին

մեղվանոցը: Ձագը մոր հետ միասին նստեց ցածրիկ խնձորենու ճյուղի վրա, կծիկ կապեց ու կախվեց:

Հայրը մի նոր ներկած, փայլուն արկղ բերեց ու ոգնեց թորոսին՝ ձագը բռնելու:



Այդ որը թորոսի հայրը տեղ եր գնում:

— Թորոս — ասաց նա, — մի քիչ հետո, յերբ ամբողջ մեղուն կհավաքվի փեթակի մեջ, կկանչես հարևան Գևորգին ու փեթակը կբերեք, կգնեք մեղունների շարքին, չմոռանաո:

Թորոսն ընկավ խաղի, գնաց հարևան մեղվանոցները, ընկերների մոտ ու մոռացավ մեղուն բերել գնել իր տեղը:

Անկողին մտնելիս միայն հիշեց, վոր ձագը դեռ իր տեղումն ե:

— Լավ, — անհոգ մտածեց նա, — առավոտը կբերեմ, ինչ կա վոր: Առավոտն արդեն արևը բարձրացել եր, և մեղունները աշխույժ աշխատանքի մեջ ելին, յերբ թորոսը վեր կացավ, և հարևան Գևորգի ոգնությամբ ձագը բերեն, դրին մայր փեթակի կողքին:

Հայրը ուշ յեկավ և հարցրեց անմիջապես.

— Ի՞նչպես են մեղունները:

Թորոսը փքված պատասխանեց:

— Ինչ պիտի լինեն, աշխատում են, ելի:

— Տեսնենք՝ ձագն ի՞նչպես ե — ասաց հայրը ու գնաց դեպի նոր մեղուն:

Մեղուները հատ ու կենտ պտտվում ելին արկանոցի առաջ և կանոնավոր աշխատանք չեր նկատվում:

— Այս ինչ ե, — տարակուսած հարցրեց հայրը, — ձագն ուժեղ ձագ ե և այսոր պետք ե վոր նա ավելի լավ աշխատեր: Յէրբ ես բերել եդ փեթակը դրել եստեղ:

— Եսոր առավոտյան, — պատասխանեց Թորոսն անհանգստացած:

— Ինչո՞ւ վոչ չերեկ. — խոճուռ դեմքով հարցրեց հայրը:

— Միենույն չի, ինչ ե...

— Դե արի՛ եստեղ ու ինքդ կտեսնես, վոր միենույն չի... Նա արդեն նկատել եր, վոր մի խուժը մեղուներ պտտվում են չերեկվա ձագի նստած տեղում, խնձորենու ճյուղի վրա:

Նրանք մոտեցան այդ տեղին: Մեղուն բավական մեծ կծիկ եր կսպել ճյուղի վրա և մի մասն ել անգործ ու անհանգիստ պտտվում եր շուրջը:

— Տեսնում ես՝ քո անփութությունն ինչ հետևանք ե ունեցել, — ասաց հայրը, — պետք ե չերեկ վերցրած լինելի ձագը, ինչպես չես քեզ ասացի: Առավոտը մեղուն թռել ե դաշտ, սովորել ե իր տեղին ու դաշտից վերադառնալով, տեսել ե, վոր իր փեթակը իր տեղում չի, եդտեղ կծիկ կսպել նստել ե:

Յե՛վ իրավ, բոլոր մեղուներն ել բեռնավորված ելին, վորը ծաղկափոշիով, վորն ել տոգած փորով, վոր, հավանորեն, լիքն եր մեղրով:

— Ի՞նչ պիտի անենք հիմա, ընկճված հարցրեց Թորոսը:

— Վոչինչ չենք կարող անել: Յեթե փեթակը նորից բերենք եստեղ, մյուս մեղուները, վոր սովորել են նոր տեղին, դաշտից չես դառնալիս չեն գա եստեղ, կդառնան նոր տեղը ու կլցվեն մյուս փեթակների մեջ:

Ի՞նչ եր մնում, վոր Թորոսը լաց լինի:

— Դե լավ, — մեղմացած ասաց հայրը, — մի կերպ կուղղենք սխալը: Հրեն հնձանում մի մայրափեթակ կա, զնա բեր, ես մեղուն հավաքենք, լցնենք մեջը, մի քիչ վորդ տանք, մայրապտուկ տանք, թող մայր հանի, հետո եդ մայրը կարող ե մեզ հարկավոր գալ:

Եդպես ել արին:

Թեև ձագը մի քիչ թուլացավ, բայց Թորոսն ունեցավ մի պահատի մայր, վորին պետք չեղած դեպքում կարող եր տալ վորեւե փեթակի:

Այդ դեպքից հետո Թորոսն ավելի ուշադիր դարձավ: Նրա ուրախությունը չափ ու սահման չուներ. նա այժմ չերկու փեթակ և մի մայրափեթակ ուներ: Նա ամբողջ ողջ զբաղված եր մեղուներով՝ մոմաթերթ եր տալիս, ստուգում եր, մայրերին եր հետևում, կտրտում եր հին փեթակի մայրապտուկները, վոր ել յերկրորդ ձագ չտա:



Հայրն ուրախ եր, վոր իր Թորոսն ուշադրությամբ անում ե իրեն հանձնած գործը:

Մեղրաբերքը գլուղում վերջանում եր: Հունիսի կեսն եր: Բուսերին սկսել ելին կոտորել:

— Հիմա ժամանակն ե սար տանելու, — ասաց հայրը, — զոչադ պիտի լինես, վոր մեղվանոցը տանենք:

— Յես զոչադ եմ, բա զոչադ չեմ, — հպարտութեամբ ասաց Թորոսը, — տեսնո՞ւմ ես՝ վոնց եմ պահում մեղունները:

Հայրը ժպտաց ու շոյեց աղայի գլուխը:

Նա գլուղում եղեր վարձեց ու սկսեց մեղվանոցը կրել:

Առավոտը շուտով, դեռ լուսը չբացված, բառնում ելին փեթակներն եղերին, ու իշատերերը Թորոսի հետ քշում, տանում ելին:

Մեղվանոցը դրին սարում, սառն աղբյուրի մոտ, ու իրենց համար մի վրան զարկեցին ապրելու:

Առաջին իսկ որից մեղուն աշխուժորեն թռավ աշխատանքի:

Ամառը սարում մեղունները լավ աշխատեցին ու շատ մեղր բերին: Փեթակները ծանրացել ելին: Շատերի վրա վերնահարկեր կալին դրված:

Թորոսը իրեն շատ լավ եր զգում: Հայրը յերբեմն ցերեկը գնում եր գլուղ, վերադառնում, բայց Թորոսն ամբողջ ամառը մեղվանոցումն եր:

Ենքան լավ եր եղտեղ: Յերեկները բավական հով եր, իսկ գիշերները՝ ուղղակի հրաշալի: Մանավանդ լուսնյակ գիշերներին, յերբ լուսնի փափուկ լուսի տակ մեկ-մեկ յերևում եր ամեն մի թուփ, ամեն մի քար, Թորոսը չեւ ել ուզում քնել և յերկար ման եր գալիս փեթակների մեջ ու ականջ դնում մեղունների գիշերալին խուլ դզողոցին:

Առավոտը, շուտ վեր կենալով, դիտում եր, թե ինչպես արևի առաջին ճառագայթների հետ մեղուն թռչում ե դաշտ՝ աշխատանքի:

Մի որ յերեկոյան հայրը Թորոսի հետ խորհուրդ եր անում, թե ինչպես պիտի սկսեն մեղրը կտրել:

— Հայրիկ, — ասում եր Թորոսը, իմ մեղունների մեղրը մենակ յես պիտի ուտեմ, չե՞:

— Այ բեզ անշնորհք, — ծիծաղեց հայրը, — ամեն մարդ վոր ինքը մենակ ուտի իր աշխատանքը, կլինի՞: Բա ըսկի մեկին չե՞ս հյուրասիրի:

Թորոսը կարմրեց:

— Հավ, մայրիկին կտամ, Սոֆիկին, մեկ ել հորեղբայր Ոհանին:

— Բա վոր մի հյուր յեկած:

— Դե ախր ենքան չի լինի, — անհանգստացած կմկմաց Թորոսը: Ուզեց ասել, թե բա իրեն ինչ կմնա:

Հայրը ծիծաղեց:

— Հավ, լավ, թող մի կտրենք, տեսնենք՝ ինչքան մեղր կլինի: Թորոսի մայր մեղուն, վոր ձագ եր տվել, հազիվ իրեն պաշար եր դղել, ուրեմն նրանից մեղր քիչ պիտի կտրվեր, իսկ ձագը լավ եր առաջ գնացել և բավականին մեղր կար մեջը:

— Գալուստենց մեղվանոցից յերկու փեթակ են գողացել, — ասաց հայրը յերեկոյան քնելուց առաջ, — եդ ըսկի լավ չի:

— Յա, բա մեղուն վոնց են գողանում:

— Փեթակի արկանոցը բռնում են, պարանով կապում, գցում շալակներն ու հանգե: Մեղրի բոլ ժամանակն ե: Մեղուն ջուրն են քաշում, մեղրն ել հանում, ուտում են:

Թորոսը սաստիկ տրտմեց:

Ի՞նչ զգվելի մարդիկ են, մի մեղր ուտելու համար այսպիսի վատ բաներ են անում:

— Հայրիկ, — ձայն տվեց նա, — յես մեղր շատ եմ սիրում:

— Հետո ի՞նչ:

— Բայց ելի եղպիսի բան չեյի անի:

— Դե են անողներն անպիտան, վատ մարդիկ են: Նրանց համար ի՞նչ կա վոր:

Պառկեցին:

Աստղերը հանգարտ փայլվում ելին պարզ յերկնքում: Ճպուռները միալար յերգում: Մեղվանոցը, կարծես, հանգստանում եր ցերեկվա անխոնջ աշխատանքից:

Թորոսը, մեջքի վրա պառկած, աչքերը տնկել եր աստղերին: Յերկար չեւ կարողանում քնել: Մտածում եր, թե ինչպես ե լինում, վոր գիշերն ուրիշ վատ մարդիկ գալիս են ու ուրիշի աշխատածը, արդար քրտինքի վաստակը գողանում, թալանում տանում են:

Հետո սկսեց հաշվել, թե ինչքան մեղր պիտի կտրի և ում պիտի հյուրասիրի: Նա ամառն աշխատել եր և հիմա գոհ եր, վոր իր ձեռքի աշխատանքով պիտի ինքը ոգտվի և դեռ ուրիշներին ել հյուրասիրի:

Քունը տարավ:

Յերազին տեսավ, թե ինչպես ինքը մեղրը ուտում ե և վոչ վոքի չի տալիս:

Մեղուներն սկսեցին մարդկային լեզվով կշտամբել նրան և ապա հարձակվեցին վրան: Նա սրտապատառ փախավ, բայց մի մեղու հասավ նրան ու պինդ խալթեց նրա թուշը:

Թորոսը տնքալով աչքերը բացեց ու սաստիկ ցավ զգաց թշի մեջ: Մի մեղու մնացել էր նրա զգեստի մեջ, քաշվել էր տեղաշորերի մեջ ու կծել նրա յերեսը քնած տեղը: Թուշը մի քիչ արորեց, դեն գցեց բարձի վրայից մեղվի ճխլված դիակը, ու աշխատեց նորից քնել, բայց նա յերկար չեւ կարողանում քնել:

Հանկարծ մի շուկ լավեց մեղվանոցի միջից:

Ականջ դրեց:

Ինչ վոր վոտնաձայներ ելին ու խեղդված փսփսոց:

Թորոսը վեր կացավ տեղից ու նայեց: Մթության մեջ յերկու մարդ կուացել ելին ու ինչ վոր բան ելին անում մեղվանոցում:

Նա իսկույն գլխի ընկավ: Գողեր են և անպատճառ իր նոր փեթակն են տանում:

Նա ինչքան ուժ ուներ՝ գոռաց, դուրս թռավ տեղից, ու գժվածի նման վազեց դեպի մարդիկ:

Նրա ձայնից զարթնեց նաև հայրն ու վազեց յետևից:



Գողերը, վորոնցից մեկը փեթակն էր շալակել, ուզում ելին ծլկվել, բայց Թորոսը հուսահատ քաշով թյամբ կախվեց նրա փեշերից: Գողը վոտքով խփեց Թորոսին, վայր գցեց փեթակը, ու յերկուսով փախան, անհետացան:

Փեթակը ցրիվ եւ յեկել:

Թորոսը պառկել էր գետնին և ցավից նվում էր, Հայրը վրա հասավ, գրկեց նրան ու պառկացրեց տեղում: Ամբողջ գիշերը նա վախից դողում էր ու ցնցվում: Առավոտը, չերբ լուսը բացվեց, նա լավ զգաց իրեն:

Պետք է փեթակը կարգի բերելին: Շրջանակները թափվել ելին մեկ-մեկու վրա, կիսով չափ դուրս ընկել փեթակից, մեղուներն էլ կծկվել ելին մեղրահացերի վրա:


Փեթակի կտուրը գլորվել, դեն էր ընկել, Հայրը Թորոսի հետ, դուռնները կապկապած հավաքեցին, կարգի բերին փեթակը ու դրին իր տեղը: Մի քիչ մեղու չեւ կոտորվել միայն: Մայրը պատսպարվել էր մեղվի կծկի ներսում ու առողջ էր:

Այժմ Թորոսն իրավունք ուներ ասելու, վոր ինքն իսկական մեղվապահ է: Հայրը գովեց նրան և նա շատ գոհ էր:

Նա իր փեթակներից մեղր կտրեց, բոլորին հյուրասիրեց և դեռ իրեն էլ բավական մնաց:

Ձմեռը դպրոցում նա պատմում էր իր ընկերներին, թե ինչպես ինքը մեղու յեր պահում և ինչ արկածներ է ունեցել:

Բոլորը լսում ելին հետաքրքրությամբ ու զանազան հարցեր տալիս, նա շատ բաներ պատմեց, շատ բան սովորեցրեց, և նրա անունը դրին «մեղվապահ Թորոս»:



ՀՀ Ազգային գրադարան



NL1390522

11

56646

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՏՐՈՍ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՐԱԴԱՐԱՆ

Շունն ու կատուն, ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ . . .	50 կ.
Մեծն Հոկտեմբեր, ԽՆԿՈ ԱՊԵՐ	30 »
Առաջին վորսը, փոխ. »	50 »
Մի գավաթ թեյ, փոխ. »	60 »
Ջեյրանի հիվանդութիւնը, ՍԻՄԱԿԻ	20 »
Վարսիկի տիկնիկը փոխ. »	20 »
Գորտին ազատեց »	20 »
Յօլակի շապիկը »	20 »
Ինչ լավ ոգնեցին »	20 »
Նանի թանը »	20 »
Մանկակոչ կամ Մանկական Ինտերնացիոնալ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	90 »
Նույնը՝ Թուրքերեն, փոխադ. ՍՈՒՍՔՅԱՆ	90 »
Հսկա բղեզն ու քաջ ծիտիկը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	50 »
Եղջերուն, ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	35 »
Նոր շոգեշարժը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	30 »
Հովիվ Մկոն ու Կկուն փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	25 »
Քնից առաջ, Թարգմ. Վ. ՆՈՐԵՆՅ	25 »
Մոծակը »	25 »
Փոքրիկ բարներ »	20 »
Ելեքտրական հավը, Թարգմ. Հ. ՍԱՌԻԿՅԱՆՅ	20 »
Այծարած Մարկոն, ԼԱՐԻՆԱՅԻ	20 »
Ս. ԶՈՐՅԱՆ—Խուժան Արշոն	25 »

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Ե

ԽՆԿՈ ԱՊԵՐ—Բազաժը

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.